ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН 7

Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար – ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵԴԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ..... 22

Vigen Tsatryan, Ruslan Kobzar – TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGTH OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES..... 22

Արգիշտի Վարդանյան – ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՀՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ..... 23

Аргишти Варданян – ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ 29

Argishti Vardanyan – A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY 29

Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ..... 30

Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ..... 38

Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....38

Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՌՈՄԻ ՊԻՈՒՍ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՁՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ..... 39

Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX 54

Feliks Movsisyan - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI'' ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER..... 55

Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....56

Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.) 72

Hovik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAKSUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905)..... 73

Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ. 74

Гаяне Оганнисян – ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. – В 1930-Х ГГ..... 82

Gayane Hovhannisyan – DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S – IN THE 1930S..... 83

Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.).....84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.). 89

Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994) 89

Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 90

Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ 95

Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY 95

Լիլիթ Մակարյան – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) 96

Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ) 103

Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS) 103

Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ ... 104

Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА 113

Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY 114

Էդգար Չախոյան – ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-2019 ԹԹ.) 115

Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.) 134

Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019) 135

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԶՆԻՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 136

Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.) 146

Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY) 147

Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻՍԻ ՓՆՏՐՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ 148

Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО. 155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-ՐԴ ԴԱՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԶԱՐԴԱՁԵՎԵՐԸ 156

Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА 164

Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES) 164

Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ 172

Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175

Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA "HOKTEMBER" IN GYUMRI 176

Զահրա Մալեքի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼՆԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՈՒԼԻԻ ԱՉՔԵՐՈՎ 177

Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187

Zahra Maleqi – HAFEZ'S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI 187

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 188

Марине Геворкян, Гаяне Товмасян – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ 199

Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ "ИСТОРИЯ АРМЕНИИ" КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ 204

Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSI'S "HISTORY OF THE ARMENIANS" 205

Վահագն Հակոբյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206

Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА 218

Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN'S LETTERS 218

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան - ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ) 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) 229

Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH) 229

Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 230

Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ 236

Meri Hovhannisyan - FEATURES OF USING THE DEBATE METHOD 236

Արմեն Խաչիկյան – ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 237

Армен Хачикян – ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА 246

Armen Khachikyan – MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES 246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷՋ: 247

ՀՈՎՆԱՆ ՁԱՆՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՋԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ, ԵՐ., ԷԴԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷՋ: 247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷՋ: 250

ՆՈՐ ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Э. Г. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ–ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.) .. 252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ 255

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ 258

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021) 263

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 266

INFORMATION ABOUT THE AUTHORS 267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 268

NOTICE FOR THE AUTHORS 268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 269

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. Արագածոտնի մարզ, պատմամշակութային հուշարձան, եկեղեցի, ամրոց, զբոսաշրջություն, զբոսաշրջային ռեսուրսներ, երթուղի, SWOT վերլուծություն:

ՀՀ Արագածոտնի մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, վանքերով: Հոդվածում տրվել է մարզի պատմամշակութային որոշ հուշարձանների վերլուծությունը, որոնք կարող են վերածվել զբոսաշրջային գրավչություն ունեցող վայրերի: Իրականացվել է մարզի զբոսաշրջային ենթակառուցվածքների վերլուծություն: Մարզում զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրների բացահայտման նպատակով իրականացվել է SWOT վերլուծություն, որի արդյունքում արվել են անհրաժեշտ եզրակացություններ և մարզում զբոսաշրջության զարգացմանն ուղղված առաջարկներ, այդ թվում՝ զբոսաշրջային երթուղիներ:

Արագածոտնը պատմականորեն կոչվել է Արագածի ոտն, Արագածոտան, Կողմն Արագածա և այլն, Մեծ Հայքի Այրարատ աշխարհի (նահանգի) կենտրոնական գավառներից էր, տարածվում էր Արագած լեռան հարավային լանջերին և հնում, բացի Աշտարակի, Թալինի տարածաշրջաններից, ընդգրկել է Եղվարդի, Արմավիրի ու Վաղարշապատի տարածքների մի մասը: Մակերեսը կազմել է 3050 քառ. կմ[1]: Արագածոտն գավառը 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո Երևանի նահանգի, իսկ 1918-1920 թթ.՝ ՀՀ Էջմիածնի և Ալեքսանդրապոլի նահանգների մասն է կազմել: Խորհրդային տարիներին՝ մինչև 1930 թ., այստեղ էր Ապարանի (Էջմիածնի գավառի Հրազդան գավառամաս), այնուհետև 1930 թվականից՝ Աշտարակի և Թալինի, իսկ 1972-ից՝ Արագածի շրջանները: ՀՀ Արագածոտնի մարզը կազմավորվել է 1995 թ. ապրիլի 12-ին: Մարզը սահմանակից է Երևանին, հարավում՝ ՀՀ Արմավիրի, արևելքում՝ Կոտայքի, հյուսիսում՝ Շիրակի և Լոռու մարզերին, իսկ արևմուտքում՝ պետական սահմանով՝ Թուրքիային: Ներկայումս ՀՀ Արագածոտնի մարզի տարածքը 2756 քառ. կմ է՝ ՀՀ տարածքի 9.3 %-ը: 2019 թ. տարեսկզբի դրությամբ ուներ 72 համայնք, 3 քաղաք, 117 գյուղ, 125.4 հազար բնակչություն, որից քաղաքային՝ 27 հազար, գյուղական՝ 98.4 հազար մարդ[2]:

Ըստ ՀՀ ԿԳՄՍՆ տրամադրած տվյալների՝ 2020 թ. դրությամբ ՀՀ-ում կա 24225 պատմամշակութային հուշարձան, որից ***Արագածոտնի մարզում՝ 1829***[3]: Ըստ նույն աղբյուրի՝ ՀՀ-ում առկա է 1475 եկեղեցի, 610 մատուռ, կրոնական կառույցների ընդհանուր քանակը՝ 2444 միավոր, որից ***Արագածոտնի մարզում՝ 238***[4]:

Խոսելով Արագածոտնի մարզի զբոսաշրջային ռեսուրսների մասին՝ նախ նշենք, որ մարզը հարուստ է հնագույն ժամանակներից մեզ հասած պատմամշակութային հուշարձաններով, ինչպես նաև՝ գիտական զբոսաշրջությանը նպաստող ռեսուրսներով: Այսպես,

* Հոդվածը ներկայացվել է 25.03.2021 թ., գրախոսվել՝ 17.04.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

[1] *Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Եր., 1963, էջ 38, 118:*

[2] *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզը թվերով, 2019, https://www.armstat.am/file/doc/99516403.pdf, https://www.armstat.am/file/doc/99516413.pdf, https://www.armstat.am/file/doc/99516448.pdf (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[3] *Տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, տվյալները հիմնված են Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հաշվարկների վրա:*

[4] *Նույն տեղում:*

ասվածի ապացույցն են Արագածոտնում հայտնաբերված կիկլոպյան ամրոցները, Ք.ա. 3-1-ին հազարամյակների բնակատեղիները (Գեղարոտ), ուրարտական շրջանի ամրոցները (Հնաբերդ, Ծաղկահովիտ), Ագարակի, Ավանի, Քաղսիի, Փարպիի բազիլիկները (5-րդ դար), Օշականի 5-րդ դարի եկեղեցին, Մաշտոցի գերեզմանը, Ամատունի իշխանների տոհմական կալվածքը, Արտավազդիկի եկեղեցին (5-6-րդ դարեր), Օհանավանքը (5-8-րդ դարեր.), Շենիկի (5-7-րդ դարեր), Մաստարայի Ս. Հովհաննես (6-րդ դար), Գառնահովիտի Ս. Գևորգ (6-7-րդ դարեր), Աշտարակի Ծիրանավոր բազիլիկն ու Կարմրավոր (Սբ. Աստվածածին, 7-րդ դար), Թալինի Կաթողիկե և Ս. Աստվածածին (7-րդ դար), Ներքին Սասնաշենի եկեղեցիները, Քրիստափորի վանքը (7-րդ դար), Իրինդի (7-րդ դար), Թեղենյաց վանքը (7-13-րդ դարեր), Ս. Մարիանե (Ս. Մարինե, 13-րդ դար), Մուղնիի Ս. Գևորգ (14-րդ դար), Աշնակ բերդ-եկեղեցին (9-11-րդ դարեր), Դաշտադեմի Քաղենիի ամրոցը (7-19-րդ դարեր), Աշտարակի կամուրջը (17-րդ դար): Պատմական տեսանկյունից իր ուրույն դերն ունի Աղձքի Արշակունի արքաների տոհմական դամբարանը: Պաշտպանական և պաշտամունքային կառույցներ են Ամբերդը, Կոշը, Թալինը, Ապարանը: Մարզի տարածքում են Մուշեղ Գալշոյանի (Կաթնաղբյուր), Գևորգ Չավուշի (Աշնակ) տուն-թանգարանները, Հայոց տառարձանների պուրակը (Աշտարակ-Ապարան մայրուղու հարևանությամբ՝ Արտաշավան գյուղի մոտ):

Բացառիկ գիտական հետաքրքրություն է ներկայացնում Բյուրականի աստղադիտարանը: Հասկանալի է, որ մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ մանրամասն լուսաբանել դրանցից յուրաքանչյուրի կառուցման, պատմամշակութային նշանակության, ներկայում կիրառության խնդիրները, ուստի անդրադառնանք միայն մի քանիսին:

Հայաստանի Միջնաշխարհը՝ Արագածոտնը, 12-14-րդ դարերում գտնվել է Զաքարյանների, ապա նրանց վասալ Վաչուտյան տոհմի իշխանության տակ, որոնց ռազմական ու վարչական կենտրոնը **Ամբերդն** էր[1]: Նրանք ձեռնամուխ են լինում ամրոցի ամրացմանը: Աճող ամրոց-բնակավայրը շրջափակվում է նոր՝ ավելի ընդարձակ պարիսպներով, որոնք իրենց մեջ ներառում են ողջ հրվանդանը: Մոնղոլական արշավանքներից հետո Ամբերդն ավերվում է, իսկ Վաչուտյաններն ստիպված հեռանում են և իրենց վարչական կենտրոնը հաստատում Վարդենիս գյուղում: 13-րդ դարի վերջերին Վաչուտյաններին հաջողվում է վերադարձնել Ամբերդը մինչև Լենկ Թեմուրի արշավանքները: Այդ շրջանում ամրոցն ամփոփվում էր միջնաբերդի և նրան հարող փոքր տարածքի սահմաններում: Ամրոցում տարբեր ժամանակաշրջաններում կառուցվել են միջնաբերդը, պարսպապատերը, Արխաշանի և Ամբերդաձորի դարպասները, Կաթողիկե եկեղեցին, մատուռը, բաղնիքը, մեծ ու փոքր ջրամբարները, գաղտնուղիները, բնակելի համալիրներ, ջրաղաց՝ Ամբերդաձորում: Ամրոցից դուրս՝ հյուսիսային կողմում, մոտ 200 մ հեռավորության վրա, գտնվում է Ամբերդի գերեզմանոցներից մեկը՝ օրորոցաձև տապանաքարերով և 12-14-րդ դարերի խաչքարերով: Ամբերդի հնագիտական պեղումները սկսվել են 1936 թ. (արշավախմբի ղեկավար՝ Հ. Օրբելի) և շարունակվել 1963-1972 թթ. (ղեկ.՝ Ն. Տոկարսկի, Ս. Հարությունյան):

Դաշտադեմի ամրոցը ևս կարող է վերածվել հետաքրքիր զբոսաշրջային ռեսուրսի: Ամրոցը գտնվում է Արագածոտնի մարզի Դաշտադեմ գյուղում (Ներքին Թալին, 1979 թ. անվանափոխվել է Դաշտադեմ)[2] և իշխող դիրք ունի Արարատյան դաշտի նկատմամբ, սակայն, ի տարբերություն մյուս բերդ-ամրոցների, զուրկ է բնական անառիկությունից, այդ պատճառով էլ օղակվել է բարձր պարսպապատով: Ամրոցը հիմնվել է 10-րդ դարում՝ Բագրատունիների կողմից[3], ապա 12-րդ դարում անցել Շադդադյաններին: 1174 թ.՝ վրաց Գեորգի Գ թագավորի կողմից Անին գրավելուց հետո, գահի իրավահաջորդ Սուլթան Շադդադյանն ապաստանում է Դաշտադեմի ամրոցում և նույն թվականի սեպտեմբերին հիմնովին

[1] *Հարությունյան Ս., Ամբերդ, Եր., 1978, էջ 51:*

[2] *Մաթևոսյան Կ., Դվին-Անի ճանապարհի Արուճ և Թալին հանգրվանները, «Անի-Շիրակի պատմության էջեր» (հոդվածների ժողովածու), Եր., 2010, էջ 247:*

[3] *Սարգսյան Գ., Դաշտադեմի ամրոցը: Հայ ամրոցաշինական եպակի կառույցի կարգացման փուլերը, «Հայ արվեստ», 2007, թիվ 3-4, էջ 36:*

վերանորոգում այն, ինչի վերաբերյալ թողել է արաբերեն արձանագրություն[1]: 12-13-րդ դարերում ամրոցն անցնում է Զաքարյաններին, որոնք լայնածավալ վերակառուցումներ են անում միջնաբերդում: Մոնղոլական արշավանքների հետևանքով ամրոցը կործանվում է և վերականգնվում 1812 թ., երբ Երևանի պարսիկ խան Հուսեինը ձեռնարկում է հսկայածավալ պարսպապատերի կառուցումը՝ դրանցում ներառելով միջնադարյան ողջ համալիրը[2]:

Անդրադառնալով մարզի եկեղեցիներից որոշների նկարագրությանը՝ նախ հիշատակենք Արագածոտնի թեմի առաջնորդանիստ **Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին:** 440 թ. փետրվարի 17-ին Վաղարշապատում վախճանված Ս. Մեսրոպ Մաշտոցի մարմինը հայոց հազարապետ Վահան Ամատունի իշխանը՝ աշխարհական ու հոգևոր բազմության հետ, բերեց և ամփոփվեց Օշական գյուղում, իսկ նրա մահից 3 տարի անց՝ 443 թ., գերեզմանի վրա «կառուցեց խորան՝ ահեղ և սքանչելի»[3], որն իր գոյությունը պահպանեց շուրջ 1200 տարի: Ապա ամբողջովին ավերակ դարձած մատուռը Փիլիպոս Ա կաթողիկոսի օրոք՝ 1639-1645 թթ., վերստին կառուցվեց: Այդ մասին վկայում է 17-րդ դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին. «Աստծու փառքի հոյակապ լայնանիստ բարձրաբերձ տաճար-հանգստարանի ողջ տանիքը փլվել, նստել էր, միայն ավագ խորանն էր մնացել ծածուկ: Եւ Սուրբ Հայրապետ Փիլիպոսն իր կաթողիկոսության ժամանակներում սկսեց և-ս նորոգել, որ և արեց մեծ ծախսերով եւ աշխատանքով, մշակված քարով, մածուկ կրով, մինչեւ ամբողջը ավարտեց մեր թվականի 1094 [1645] ի փառս Աստծո»[4]: Վերաշինված եկեղեցին գոյատևեց 200 տարի: Սակայն այն նեղլիկ էր, անշուք ու մռայլ և արժանի չէր Մեծ Ուսուցչապետի շիրիմին: Օշականի կենտրոնում այժմ կանգուն է Սբ. Մեսրոպ Մաշտոց թաղածածկ դահլիճ տիպի եկեղեցին, որը 443 թ. Վահան Ամատունու հիմնադրած եկեղեցու տեղում 1875-1879 թթ. կառուցել է Գևորգ Դ կաթողիկոսը: Նոր եկեղեցու ճարտարապետական տեսքը հարազատ է 4-5-րդ դարերի ավանդներին: Այն միանավ բազիլիկ է՝ պարզ հորինվածքով, ութ գեղաշիտակ սյուներով, երկհարկանի շքեղ զանգակատնով: 1884 թ. կառուցված այս զանգակատունը բացառիկ երևույթ է եկեղեցաշինության մեջ: Եկեղեցու բեմի ձախ կողմի աստիճանները տանում են դեպի գետնահարկ՝ հնագույն դամբարանի առաջին հարկը, որտեղ էլ մարմարյա գերեզմանասալի տակ հանգչում է Ս. Մեսրոպ Մաշտոցի աճյունը: 1961 թ.՝ Վազգեն Ա կաթողիկոսի օրոք, ձեռնարկվեցին եկեղեցու մասնակի բարեզարդման ու շրջապատի բարեկարգման աշխատանքները, իսկ 1964-1966 թթ. որմնանկարներով ծածկվեցին եկեղեցու ներսի պատերը: Եկեղեցին ոչ միայն ամփոփում է Մեսրոպ Մաշտոցի մասունքները, այլև իր հիմնադրի՝ հազարապետ Վահան Ամատունու դամբարանը: Այն գտնվում է եկեղեցուց դեպի հարավ: Եկեղեցու բակում են գտնվում նաև Արագածոտնի թեմի՝ հիմնովին վերանորոգված Առաջնորդարանի, ինչպես նաև՝ Դպրատան շենքերը:

Պատմական Այրարատ նահանգի Նիգ-Ապարան գավառում է **Թեղենյաց վանքը**, որը միջնադարյան Հայաստանի հոգևոր, մշակութային ու գրչության կարևոր կենտրոններից էր: Այն գտնվում է Բուժական գյուղից 3 կմ հյուսիս՝ անտառածածկ տարածքում: Վանական համալիրը բաղկացած է զույգ որմնամույթերով «գմբեթավոր դահլիճ» տիպին պատկանող Կաթողիկե եկեղեցուց, գավթից, սեղանատնից, գրչատնից և գավթին հյուսիսից հարող կառույցից, հիմնական հուշահամալիրից 30 մ արևելք գտնվող 5-7-րդ դարերի քառախորան փոքր եկեղեցուց, համակառույցից հյուսիս գտնվող գերեզմանատնից: Թեղենյաց վանքը գրավոր աղբյուրներում հիշատակվում է դեռևս 8-րդ դարում, սակայն վանքի ծաղկուն շրջանն սկսվում է 12-13-րդ դարերից, երբ այն անցնում է Վաչուտյանների հովանավորության տակ: Վանքը առավել հայտնի դարձավ 13-14-րդ դարերում, երբ այստեղ գործում էր

---

[1] *Хачатрян А., Корпус арабских надписей Армении, VIII – XVI вв., Ереван, Изд. АН Арм. ССР, 1987, с. 46.*

[2] *Ալեքսանյան Տ., Միրիջանյան Դ., Դաշտադեմի 2011 թ. պեղումները (նախնական հաղորդում), «Էջմիածին», 2012, Ը, էջ 102-106:*

[3] *Չամչյան Մ., Հայոց պատմություն, հտ. Ա., Եր., 1985, էջ 534:*

[4] *Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Եր., 1988, էջ 276:*

մեծ միաբանություն: Մշակութային հզոր օջախի դերը Թեղենյաց վանքը կորցնում է 14-րդ դարի կեսին, թեև շարունակում է գործել մինչև 17-րդ դարը, որից հետո մատենագիտական և վիմագրական աղբյուրներում հիշատակվում է, սակայն ոչ որպես գործող վանք[1]:

Ուշմիջնադարյան մյուս կարևոր հոգևոր ու մշակութային կենտրոնը Արագածոտնում **Ուշիի Ս. Սարգիս** վանքն է, որը շարունակաբար գործել է 5-18-րդ դարերում և կործանվել 1827 թ. երկրաշարժից[2]: 1999-2001 թթ. ձեռնարկած պեղումների շնորհիվ հողի թանձր շերտի տակից բացվել են վանքի կառույցները՝ Ս. Սարգիս եկեղեցի-վկայարանը, Ս. Աստվածածին եկեղեցին, գավիթը, զանգակատունը, արտաքին սրահը, վանական խցերը, հասարակական, բնակելի և տնտեսական շինությունները, պարսպապատը՝ հինգ աշտարակներով, վանքի մուտքերը:

Աշտարակի Կարմրավոր Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 7-րդ դարի երկրորդ կեսին, կարմրագույն տուֆի սրբատաշ քարերից: Հայկական փոքր խաչաձև գմբեթավոր եկեղեցիներից անաղարտ պահպանված (ներառյալ նախնական կղմինդրե ծածկը) լավագույն նմուշն է. Գեղատեսիլ է՝ ներդաշնակ համաչափություններով, բարձրարվեստ ծավալային հորինվածքով: Ներսում պահպանվել են արևելաքրիստոնեական արվեստին բնորոշ 7-րդ դարի որմնանկարների մնացորդներ[3]:

Հովհաննավանքը հայկական վանական համալիր է Արագածոտնի մարզի Օհանավան գյուղում՝ Քասախ գետի կիրճի աջ եզրին, բարձր ու գեղատեսիլ վայրում: Վանքը նվիրված է Հովհաննես Մկրտչին: Պատմականորեն մտնում է Այրարատ նահանգի Արագածոտն գավառի մեջ: Վանքի հնագույն կառույցը 5-րդ դարի միանավ բազիլիկ է, որի փայտե ծածկը 6-րդ դարում փոխարինվել է քարե թաղածածկ տանիքով: Վաչե և Քուրդ Վաչուտյանները գլխավոր տաճարը՝ Ս. Կարապետ եկեղեցին և ժամատունը, կառուցել են 13-րդ դարում [4]:

Սաղմոսավանքը կառուցվել է 13-րդ դարում: Վանքը գտնվում է Քասախ գետի խոր կիրճի եզրին: 1215 թ. Վաչե Վաչուտյանը կառուցել է Սաղմոսավանի Ս. Սիոն եկեղեցին[5]: Վանքի տարածքում, նրան կից գերեզմանոցում, ինչպես նաև՝ շինությունների ներսում, պահպանվել են բազմաթիվ տապանաքարեր, որոնց մի մասը՝ հարուստ զարդաքանդակված խաչքարերի տեսքով: Առավել հետաքրքիր է պատվանդաններով խաչքարերի խումբը: 1255 թ. վանքում կառուցվել է ձեռագրատուն, որի արևմտյան ճակատում գտնվում են խաչքարեր: 19-րդ դարում Սաղմոսավանքը նորոգվել է Խրիմյան Հայրիկ կաթողիկոսի կողմից[6]:

Աշտարակի և Ապարանի սահմանագծին է գտնվում **Հայոց այբուբենի հուշարձանը**, որը կառուցվել է 2005 թ. և բաղկացած է այբուբենի 39 տառերի զարդաքանդակներից:

Ապարանը գտնվում է Երևանից 59 կմ հյուսիս-արևմուտք՝ Քասաղի վերին ավազանում, Ապարանի դաշտի հյուսիս-արևմուտքում: Հնում կոչվել է Քասաղ, եղել է Գնթունյաց նախարարական տան նստավայրը, որտեղ 5-րդ դարում նրանց կառուցած Քասաղի բազիլիկը ցարդ կանգուն է: 10-րդ դարից Քասաղը վերանվանվում է Ապարան, այսինքն՝ պալատ: Ապարանում է ամփոփված հայ ազատագրական պայքարի խոշոր գործիչ Դրոյի աճյունը:

Քասախի հռչակավոր բազիլիկ կամ **Ս. Խաչ եկեղեցին** գտնվում է Ապարան քաղաքում: Այն 5-րդ դարի կառույց է և կանգուն է մինչև այսօր: Քասախի բազիլիկ եկեղեցին հայկական ճարտարապետության հանգուցային կառույցներից և գլուխգործոցներից մեկն է: Եկեղեցին ունի ուղղանկյուն հատակագիծ, կառուցված է արևելք-արևմուտք առանցքով, ներսից՝ պայտաձև, արտաքինից՝ հնգանիստ բեմի աբսիդով: Կառույցը վեցամույթ եռանավ բազիլիկայի հորինվածքով կերտված ճարտարապետական հուշարձան է[7]:

---

[1] *Պետրոսյանց Վ., Նիգ-Ապարանի պատմաճարտարապետական հուշարձանները, Եր., 1988, էջ 66:*

[2] *Բաբայան Ֆ., Ուշիի Սուրբ Սարգիս վանքը, Եր., 2005, էջ 3:*

[3] *Շահապիկ Ե., Աշտարակի պատմությունը, Եր., 1987:*

[4] *Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Եր., 1992, էջ 309:*

[5] *Մանուչարյան Ա., Սաղմոսավանքը պատմության քառուղիներում, «Տարեգիրք» (Աստվածաբանության ֆակուլտետ), հ. 11, Եր., 2016, էջ 100:*

[6] *Եղիազարյան Հ., Սաղմոսավանք, Էջմիածին, 1961, էջ 40:*

[7] *Տե՛ս Ապարանի Սուրբ Խաչ եկեղեցի. Պատերազիրք, Էջմիածին, 2003:*

Միրաքի եկեղեցին գտնվում է պատմական Նիգ-Ապարան գավառում: Գյուղի պատմական անունը հայտնի չէ, Միրաք անունը հիշատակվում է 1810-ական թթ.: Եկեղեցին կառուցված է տեղական որձաքարից: Ճարտարապետական հորինվածքից ու հարդարանքից դատելով՝ կառույցը թվագրվում է 4-5-րդ դարերով: Ուշ միջնադարում եկեղեցին աչքի է ընկել տնտեսական գործունեությամբ, ուստի նրան օժանդակ շինություն է կցակառուցվել[1]:

Միրաքից 2 կմ հյուսիս՝ Ծաղկունյաց լեռնաբազուկներից մեկի ստորոտին, գտնվում է **Մելիք գյուղը**: Գյուղի կենտրոնում 19-րդ դարի վերջին կառուցվել է թաղակապ եկեղեցի, որի շինաքարերի մեջ մեծ հետաքրքրություն են ներկայացնում երկու տապանաքար: Հյուսիսային պատի մեջ գտնվող տապանաքարի արձանագրությունից պարզվում է, որ Ապանեցի Մելիքն իր հոր՝ Սային բեկի և պապ Միրզայի հետ եկել են Շարապխանայից և հիմնել գյուղը: Մելիքը, արձանագրության համաձայն, մահացել է 1680 թ.: Փաստորեն, այդ տապանագիրը միաժամանակ գյուղի ծննդյան վկայականն է:

Ս. Աստվածընկալ վանական համալիրն ընկած է Երնջատափ գյուղից 1 կմ արևմուտք՝ Քասախի կիրճի աջակողմյան բարձր բլրի վրա: Համալիրի հնագույն կառույցը 5-րդ դարի միանավ բազիլիկ եկեղեցի է, որն ունի պայտաձև աղեղներ և ներքին որմնասյուների հնագույն խարիսխներ ու խոյակներ: Ծածկը փլված է, եկեղեցին կառուցված է գորշավուն տուֆի սրբատաշ քարով, ունի երկու դուռ՝ հյուսիսային և հարավային կողմերից: Հին եկեղեցին 1207 թ. արձանագրության մեջ Ս. Աստվածածին է անվանված, իր ներփակ սենյակով հնում եղել է Ս. Հակոբի վկայարան-դամբարան: Դրա լավագույն վկայությունը Հովհաննես Շահխաթունյանցի գրի առած ավանդությունն է[2]: Կաթողիկե եկեղեցին կառուցելու ժամանակ սրբի մասունքները հին վկայարանից տեղափոխվել են ու ամփոփվել նոր եկեղեցում՝ «Ի հիման սեղանոյ սրբոյ»: Նույն ավանդությունից իմացվում է, որ նորակառույց եկեղեցին Ս. Աստվածընկալ անունն է ստացել: 1207 թ. միանավ բազիլիկ եկեղեցին նորոգվել է, և այդտեղ միաբանություն է հաստատվել: Այդ մասին փորագրված է եկեղեցու հարավային պատին: Արձանագրությունից պարզվում է, որ միաբանության առաջնորդը Տեր Գրիգորն է: Եկեղեցին Ս. Աստվածընկալ անունն ստացել է հայտնի քանդակազարդ խաչից:

Եղիպատրուշի բազիլիկ եկեղեցին Ծաղկունյաց լեռնաբազուկներից մեկի ստորոտին է՝ լեռնային գետակի աջ կողմում, շրջկենտրոնից 12 կմ հարավ-արևելք: Գյուղի շրջակայքում պահպանվել են բազիլիկ կիսավեր (5-րդ դար) և Կաթողիկե (Ս. Աստվածածին 13-րդ դար) եկեղեցիները: Բազիլիկ եկեղեցին կանգուն է գյուղի հին գերեզմանոցում: Պահպանվել է հյուսիսային պատի և արևելյան աբսիդի մի հատվածը: Այն կառուցված է տեղական գորշ քարով, քիվը ձևավորված է տերևաձև զարդով: Թ. Թորամանյանը պսակի ոճից կարծում է, որ եկեղեցին կառուցվել է 5-րդ դարից ոչ ուշ: Բազիլիկ եկեղեցու մոտ 13-րդ դարում հիմնադրվել է եկեղեցական նոր համալիր: Կառուցվել են Կաթողիկե եկեղեցին և գավիթը[3]:

Հնագիտական պեղումներից պարզվում է, որ **Թալինը** բնակելի է եղել Ք. ա. 2-րդ հազարամյակից, իսկ ըստ Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» աշխատության՝ Թալինը հիմնադրվել է Անանիոս Բագրատունի իշխանի կողմից 9-10-րդ դդ.[4]: Թալինի տարածաշրջանը Արարատյան գոգավորության նախալեռնային և լեռնային գոտում է՝ Արագած լեռան հարավարևմտյան կողմում: Շրջանում կան կիկլոպյան կառույցներ, կրոմլեխներ, հին դամբարաններ, կոթող-մահարձաններ: Միջնադարյան ճարտարապետական հուշարձաններից են Կաքավաձորի միանավ եկեղեցին (5-րդ դար), Մաստարայի Ս. Հովհաննես (7-րդ դար), Գառնահովիտի Ս. Գևորգ (6-7-րդ դարեր), Իրինդի եկեղեցին (7-րդ դար), Թալինի քաղաքի տարածաշրջանի հուշարձանների խումբը (7-րդ դար), Աշնակի բերդ-եկեղեցին, Բայսզի գմբեթավոր դահլիճը (12-13-րդ դարեր):

---

[1] *Պետրոսյանց Վ., նշվ. աշխ., էջ 68-77:*

[2] *Տե՛ս Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842:*

[3] *Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. II , Եր., 1948, էջ 201:*

[4] *Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Եր., 1985, էջ 76:*

Թալին ավանի հյուսիսային եզրի տափարակի վրա իր պատկառելի պատկերով վեր է խոյանում հայկական ճարտարապետության անկրկնելի գոհարներից մեկը՝ Թալինի **Կաթողիկեն:** Եկեղեցու կառուցման մասին շինարարական և մատենագիտական տեղեկություններ չկան, սակայն, ըստ նրա հատակագծային կերպարի, վերձիգ ծավալների, արտաքին հարդարանքի, վերագրվում է 7-րդ դարին: Կաթողիկեի պատերի վրա եղած մի քանի արձանագրություններից վաղագույնը թվագրվում է 784 թ. և վերաբերում է Ուխտատուր վանականի միջոցներով Թալին ջուր բերելու խնդրին: 7-րդ դարում Թալինում իշխում էին Կամսարական նախարարները, որոնք հայտնի են իրենց շինարարական ծավալուն աշխատանքներով, ուստի, ամենայն հավանակությամբ, նրանք էլ կառուցել են Կաթողիկեն: Թալինի Կաթողիկեն գմբեթավոր բազիլիկ է, ճարտարապետական հորինվածքով նման է նույն դարի սկզբներին Դվինում վերակառուցված Կաթողիկե տաճարին, սակայն կրում է ժամանակի նորամուծությունները, ինչպես օրինակ՝ գմբեթի առագաստային փոխանցումը, ճոխ դեկորատիվ հարդարանքը և այլն[1]: Այն կանգուն է մնացել մինչև 1840 թ. աղետաբեր երկրաշարժը: Երկրորդ անգամ ավերվել է 1926 թ. երկրաշարժի ժամանակ: Հուշարձանների պահպանության կոմիտեն այն մասնակիորեն վերականգնել է 1947 և 1970 թթ.:

Թալինի Կաթողիկե եկեղեցուց հարավ-արևելք՝ մոտ 200 մետր հեռավորության վրա, գտնվում է **Ս. Աստվածածին եկեղեցին**: Այն պահպանված է ամբողջությամբ: Արևմտյան ճակատի արձանագրությունը հավաստում է, որ 681 թ. Ս. Աստվածածին կամ Փոքր եկեղեցին կառուցել է պատրիկ Ներսես Կամսարականը (արձանագրության մեջ հիշում է նաև կնոջը՝ Շուշանին, և որդուն՝ Հրահատին)[2]: Այն խաչաձև, կենտրոնագմբեթ փոքր կառույց է և վաղմիջնադարյան հայկական ճարտարապետության ինքնատիպ դրսևորումներից է:

Իրինդ գյուղը Թալին շրջկենտրոնից 14 կմ հյուսիս-արևելք է: Իրինդը և նրա շրջակայքը, բնակության համար հարմար դիրք ունենալով, ծառայել են մարդուն և օգտագործվել դեռ հազարամյակներ առաջ: Հայկական վաղմիջնադարյան եկեղեցական ճարտարապետության եզակի նմուշներից մեկը հանդիսացող **Իրինդի Ս. Գևորգ եկեղեցին** բնակավայրի կենտրոնում է: Եկեղեցին կառուցված է վարդագույն տուֆից, ճակատների վրա՝ սրբատաշ, ունի երկաստիճան հիմնախորան: Ճակատներին կան խորշեր և կամարների գալարահյուս զարդաքանդակներ: Թմբուկի լուսամուտներն ունեն պայտաձև կամարներ: Առանց շինարարական վկայագրի, սակայն, ըստ համանման այլ հուշարձանների հետ համեմատության և զուգադրության, այն ևս թվագրվում է 7-րդ դարով[3]:

Ս. Քրիստափոր եկեղեցին գտնվում է Դաշտադեմ գյուղից 2,5 կմ հարավ: Սրբատաշ գորշ տուֆից է, ներսից՝ խաչաձև, արտաքինից՝ ներկալված ուղղանկյան մեջ, և թվագրվում է 7-րդ դարով: Քառակուսի հիմքից անցումն ութանիստ գմբեթին իրականացված է առագաստների միջոցով: Միակ՝ արևմտյան մուտքը շրջակալված է քանդակազարդ զույգ որմնասյուներով: Ս. Քրիստափորը ամբողջությամբ վերականգնվել է 1980 թ.: Շրջապատված է կոպտատաշ բազալտե պարսպով, ավելացվել են խցեր: Եկեղեցուց քիչ հյուսիս պահպանված է սև տուֆից կառուցված քառակուսի հատակագծով աշտարակաձև մի կառույց, որը պայմանականորեն համարվում է զանգակատուն[4]:

Բացի կրոնական և պատմամշակութային հուշարձաններից, որոնք, իրավամբ, այսօր զբոսաշրջային ռեսուրսներ են համարվում, գիտական զբոսաշրջության զարգացման համար էական նշանակություն ունի նաև ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանը, որը Արագած լեռան հարավային գեղատեսիլ լանջին հիմնադրվել է 1946 թ.՝ Աստղադիտարանի առաջին տնօրեն Վիկտոր Համբարձումյանի նախաձեռնությամբ: Աստղադիտարանի գիտական գործունեությունն ուղղված է Տիեզերքում անկայուն երևույթների հետազոտմանը,

---

[1] *Մաթևոսյան Կ., Արուճի և Թալինի պատմության էջեր (7-13-րդ դդ.), «Էջմիածին», 2009, Ա, էջ 50-51:*

[2] *Գրիգորյան Վ., Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձաններ, Եր., 1982, էջ 20:*

[3] *Արագածոտնի մարզպետարան, Մշակույթի և սպորտի կապմակերպություններ, http://aragatsotn.mtad.am/culture-sport/ (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[4] *Նույն տեղում:*

որի համար նախատեսված են հինգ հիմնական դիտակներ, որոնցից են՝ աստղադիտարանի խոշորագույն 2,6 մ և Շմիդտի 1,0 մ հանրահայտ դիտակները: Աստղադիտարանը՝ որպես ճարտարապետական համալիր, բաղկացած է հիմնական և օժանդակ կառույցներից, որոնք նախագծել է հայ նշանավոր ճարտարապետ Սամվել Սաֆարյանը[1]:

Արագածոտնի մարզում է Արագածի ալպյան արգելավայրը, որն ստեղծվել է 1959 թ.՝ սառցադաշտային Քարի լճի և հարակից ալպյան մարգագետինների (300 հա) պահպանության համար: Մարզում կա նաև բնության 23 հուշարձան[2]: Մարզի տարածքով են հոսում Քասախ, Հալավար, Գեղաձոր, Շահվերդ, Ամբերդ և Գեղարոտ գետերը: Արագածոտնում են գտնվում Արագածը (4090 մ), Ծաղկասար (2219 մ), Իրինդ (2050 մ), Արտենի (2047 մ) հանգած հրաբուխները[3]: Արագածոտնի մարզն ունի նաև համեղ ազգային խոհանոց, ինչը պետք է ընդգրկել զբոսաշրջային երթուղիներում: Մարզը հայտնի է իր արիշտայով, թոնրի լավաշով, Աշտարակի շարոցով (սուջուխ), Արագածոտնի հագանիով (հավ, կարմիր տաքդեղ, չորաթան, սխտոր, ընկույզ), տժվժիկով և իհարկե արևահամ ծիրանով[4]:

Արագածոտնի մարզի զբոսաշրջային ակտիվները կարող են նպաստել զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացմանը՝ կրոնական, պատմամշակութային, գիտաճանաչողական, գիտական-հնագիտական, ագրո և էկո, գաստրոնոմիական, սպորտային և այլն:

Զբոսաշրջային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման տեսանկյունից ավելորդ չէ անդրադառնալ նաև մարզի սոցիալ-տնտեսական վիճակին: 2018 թ. Արագածոտնի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռը ՀՀ համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են՝ արդյունաբերություն՝ 2.7%, գյուղատնտեսություն՝ 10.2%, շինարարություն՝ 4.8%, մանրածախ առևտուր՝ 1.4%, ծառայություններ՝ 0.7%[5]: Արագածոտնի մարզի ՀՆԱ-ն 2017 թ. շուկայական գներով կազմել է 175229.2 մլն դրամ (ՀՀ 3.2%-ը)[6], գործազրկության մակարդակը՝ 7.1% (ՀՀ գործազրկության մակարդակը՝ 20.5%), աշխատուժի թվաքանակը՝ 42.3 հազար, զբաղվածները՝ 39.3 հազար, գործազուրկները՝ 3 հազար մարդ[7]: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2019 թ. ՀՀ է ժամանել 1894377 զբոսաշրջիկ, իսկ ՀՀ-ից մեկնել է 1867888 զբոսաշրջիկ: Նախորդ տարվա համեմատ՝ ժամանողների թվաքանակն աճել է 14.7%-ով[8]: 2019 թ., նախորդ տարվա համեմատ, 41.4%-ով աճել է նաև ներքին զբոսաշրջիկների թվաքանակը՝ կազմելով 1544600 մարդ, որոնց մեջ գերակշիռ մաս են կազմում հանգստի և ժամանցի նպատակով ճամփորդողները[9]: Պետք է նշել, սակայն, որ չկա պաշտոնական վիճակագրություն, թե որքան են կազմել ներգնա և ներքին զբոսաշրջային այցելությունները՝ ըստ ՀՀ մարզերի:

---

[1] *Բյուրականի աստղադիտարան, www.bao.am/history/history.php (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[2] *ՀՀ կառավարության 25 սեպտեմբերի 2014 թվականի N 1059-Ա որոշումը Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռակմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93166&fbclid=IwAR0f53ZIPVB1HdD778KWYVPOB9gkHMPWflzAYrEh_RCKct51pJ4VyeNfio (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[3] *ՀՀ Արագածոտնի 2017-2025 թթ. զարգացման ռակմավարություն, էջ 10, http://aragatsotn.mtad.am/files/docs/49357.pdf (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[4] *Թովմասյան Գ., Հայաստանի և Արցախի գաստրոբարտեզը որպես զբոսաշրջային մարքեթինգի բաղադրիչ, https://asue.am/am/amberd/publication/analytics/gastroenterology-of-armenia-and-artsakh-as-a-component-of-tourism-marketing (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[5] *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզը թվերով, 2019, https://www.armstat.am/file/doc/99516403.pdf, https://www.armstat.am/file/doc/99516413.pdf, https://www.armstat.am/file/doc/99516448.pdf (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[6] *Տե՛ս նույն տեղում:*

[7] *Տե՛ս նույն տեղում:*

[8] *ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 139, https://www.armstat.am/file/article/sv_12_19a_421.pdf (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[9] *Թովմասյան Գ., Ինչպիսի՞ն էր ՀՀ զբոսաշրջության ոլորտը 2019 թվականին և ի՞նչ սպասել 2020 թ. «կորոնավիրուսային համատեքստում», https://asue.am/amberd/publication/analytics/what-was-the-ra-tourism-sphere-in-2019-and-what-to-wait-for-2020-in-the-coronavirus-context (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

Արագածոտնի մարզի մասնաբաժինը ՀՀ ծառայությունների ծավալի ընդհանուր կառուցվածքում կազմում է 0,73%: Արագածոտնում կացության և հանրային սննդի կազմակերպման ծառայությունների ծավալը 2018 թ. կազմել է ՀՀ ծառայությունների ընդհանուր ծավալի 0,4%-ը, մշակույթի, զվարճությունների և հանգստի ծառայությունների ծավալը՝ ընդհանուրի 0,006%-ը:

	2015	2016	2017	2018
Ծառայությունների ծավալը, ընդամենը				
ՀՀ	1154348,9	1279611,2	1469320,6	1779252,7
Արագածոն	9138.0	9272.4	10822.2	12994.5
Կացության և հանրային սննդի կազմակերպում				
ՀՀ	90 815.4	94 387.9	112 035.6	150 901.7
Արագածոն	361.2	296.2	433.7	542.7
Մշակույթ, զվարճություններ, հանգիստ				
ՀՀ	176635,3	236156,8	284765,7	391864,1
Արագածոտն	33.8	46.8	50.5	23.0

Աղյուսակ 1. Ծառայությունների ծավալը Արագածոտնի մարզում, մլն դրամ[1]

ՀՀ-ում վերջին տարիներին աճում է հյուրանոցային տնտեսության օբյեկտների (ՀՏՕ) և հանրային սննդի օբյեկտների թվաքանակը: 2019 թ. ՀՀ-ում եղել է 702 ՀՏՕ, որից Երևանում՝ 413, Արագածոտնում՝ 7: 2019 թ. ՀՀ-ում եղել է հանրային սննդի կազմակերպման 1894 օբյեկտ, որից 1252-ը՝ Երևանում, 30-ը՝ Արագածոտն մարզում: Զբոսաշրջային գործակալությունների թիվը ՀՀ-ում 2019 թ. կազմել է 687, որից 578-ը՝ Երևանում, 5-ը՝ Արագածոտն մարզում[2]: Ինչպես տեսնում ենք, թե՛ ծառայությունների ծավալում, թե՛ զբոսաշրջային ենթակառուցվածքների առումով, Արագածոտնի մարզն առաջատար չէ: Հարկ է նշել, որ Արագածոտնի մարզը չունի զբոսաշրջության զարգացման ծրագիր կամ ռազմավարություն, այն մշակման փուլում է, իսկ մարզի զարգացման 2017-2025 թթ. ռազմավարության մեջ շատ փոքր հատված է հատկացված զբոսաշրջությանը՝ առանց զարգացման հնարավորությունների, հիմնախնդիրների, հիմնական քայլերի վերլուծության:

Տարբեր զբոսաշրջային գործակալությունների կողմից մատուցվող ծառայություններն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ Արագածոտնի մարզի զբոսաշրջային գրավչությունների հիման վրա կան հետևյալ ուղղություններով երթուղիներ.

✓ Արագածոտնի 11 եկեղեցիները՝ Օշական, Կարմրավոր, Ծիրանավոր, Սպիտակավոր, Ս. Մարիանե, Ս. Սարգիս, Մուղնու Ս. Գևորգ, Կարբիի Ս. Աստվածածին, Սաղմոսավանք, Հովհաննավանք, Ուշիի Ս. Սարգիս[3],

✓ Քաղաքային տուր Աշտարակում և Գուրմե Դուրմե[4],

✓ Մուղնի, Հովհաննավանք, Սաղմոսավանք, Ծաղկեվանք[5],

✓ Ամբերդ, Քարի լիճ, Մուղնի, Տառերի պուրակ[6],

---

[1] *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզը թվերով, 2019, https://www.armstat.am/file/doc/99516403.pdf, https://www.armstat.am/file/doc/99516413.pdf, https://www.armstat.am/file/doc/99516448.pdf (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[2] *Տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ վիճակագրական կոմիտեն:*

[3] *Արագածոտնի 11 եկեղեցիները, https://onewaytour.com/hy/regular-daily-tours/aragatsotni-11-yekeghetsiner/ (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[4] *Քաղաքային տուր Աշտարակում և Գուրմե Դուրմե, https://onewaytour.com/hy/regular-daily-tours/kaghakayin-tur ashtarakum-ev-gurme-durme/ (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[5] *Մուղնի, Հովհաննավանք, Սաղմոսավանք, Ծաղկեվանք, https://onewaytour.com/hy/regular-daily-tours/mughni-hovhannavank-saghmosavank/?token=regular-0, (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[6] *Ամբերդ, Քարի լիճ, Մուղնի, Տառերի պուրակ, https://onewaytour.com/hy/regular-daily-tours/amberd-kari-lich-tareri-purak/?token=regular-0 (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

✓ Աստղերի շքերթ Բյուրականում[1],
✓ Թալին (Կաթողիկե), Դաշտադեմ, Երերույք (Շիրակի մարզ)[2],
✓ Քայլարշավ դեպի Արագած լեռ և Ամբերդ[3],
✓ Գեղարոտի ջրվեժ[4],
✓ Ճաղկեվանք, Մուղնի, Արշակունիների դամբարան, Տեղերի վանք[5],
✓ Սաղմոսավանք, Հովհաննավանք, Հայոց այբուբենի հուշարձան, Քարի լիճ, Ամբերդ[6]:

Արագածոտնի մարզի զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրների վերլուծության համար կատարել ենք SWOT վերլուծություն, ինչը թույլ է տալիս մատնանշել զբոսաշրջության զարգացման ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր	Հնարավորություններ	Սպառնալիքներ
Պատմամշակութային հարուստ ժառանգություն	Զբոսաշրջային տուրերում ընդգրկված են քիչ թվով վայրեր	Զբոսաշրջային տուրերում տարբեր վայրերի ընդգրկում	Ճանապարհների ոչ բարվոք վիճակ
Կրոնական կառույցներ	Վիճակագրության բացակայություն	Մարքեթինգային միջոցառումների շնորհիվ զբոսաշրջիկների թվաքանակի աճ	Գյուղական բնակչության աղքատություն
Էկո և ագրո զբոսաշրջային ակտիվներ	Զբոսաշրջության զարգացման ծրագրի բացակայություն	Զբոսաշրջային նպատակներով դրամաշնորհների ներգրավում	Արտագաղթ
Ազգային խոհանոց	Թերի մարքեթինգ	Գյուղերում ագրոզբոսաշրջության զարգացման հնարավորություն	Որոշ գյուղերում խմելու ջրի սակավություն
Գյուղական կենցաղ և հյուրընկալ վերաբերմունք	Մարզում ՀՏՕ-ների քիչ թիվ	Փառատոնների կազմակերպման հնարավորություն	Ենթակառուցվածքների թերզարգացվածություն
Լեռնագնացության տուրեր դեպի Արագած լեռ	Մարզում հանրային սննդի օբյեկտների փոքր քանակ	Առկա ռեսուրսների հիման վրա զբոսաշրջային նոր երթուղիների մշակում	Շրջակա միջավայրի աղտոտում
Բյուրականի աստղադիտարանի առկայություն	Զբոսաշրջային տեղեկատվության պակաս		

Աղյուսակ 2. Արագածոտնի մարզի զբոսաշրջության զարգացման SWOT վերլուծություն

Վերլուծության արդյունքում կարելի է մատնանշել այն հիմնական քայլերը, որոնք կնպաստեն մարզում զբոսաշրջության զարգացմանը.

➢ առկա զբոսաշրջային ռեսուրսների հիման վրա մշակել նոր երթուղիներ՝ ավելի շատ վայրեր (պատմաճարտարապետական, պաշտպանական կառույցներ և այլն) ներառելով

[1] *Աստղերի շքերթ Բյուրականում, https://onewaytour.com/hy/regular-daily-tours/astgheri-shkert-byurakanum/?token=regular-0 (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[2] *Անհատական տուրեր և էքսկուրսիաներ, https://onewaytour.com/hy/anhatakan-turer/?tour=33948 (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[3] *Քայլարշավ դեպի Արագած լեռ, Ամբերդ, https://onewaytour.com/hy/regular-daily-tours/kaylarshav-depi-aragats-ler-amberd/?r=9&start=1595734200&end=1595707200 (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[4] *Գեղարոտի ջրվեժ, https://www.facebook.com/positivedaytour (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[5] *Ճաղկեվանք, Մուղնի, Արշ. դամբարան, Տեղերի վանք, https://www.facebook.com/wingstour.am/photos/pcb.2418477308445814/2418468488446696 (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

[6] *Սաղմոսավանք, Հովհաննավանք, Հայոց այբուբենի հուշարձան, Քարի լիճ, Ամբերդ, https://explorearmenia.am/hy/excursions/sahmosavank hovhanavank-tareri-purak-kari-lich-amberd-amroc.html (վերջին մուտքը՝ 25.09.2020 թ.):*

երթուղիներում, ինչը կնպաստի նաև տարբեր համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը,

➢ մշակել մարզի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն՝ հաշվի առնելով հարուստ ռեսուրսային հենքը,

➢ բարելավել ոլորտի վիճակագրական հաշվառումը,

➢ իրականացնել մարքեթինգային գործողություններ, այդ թվում՝ սոցիալական ցանցերի ընդգրկմամբ՝ մարզի զբոսաշրջային գրավչությունը պոտենցիալ զբոսաշրջիկներին ներկայացնելու համար,

➢ ընդլայնել զբոսաշրջային տեղեկատվությունը բոլոր հնարավոր հարթակներում, ինչպես նաև մարզում համապատասխան զբոսաշրջային տեղեկատվական գրասենյակների ստեղծման միջոցով,

➢ բարելավել ենթակառուցվածքները, վերանորոգել ճանապարհները, հատկապես՝ գյուղականները, ինչն իր հերթին կնպաստի ագրոզբոսաշրջության զարգացմանը,

➢ իրականացնել ագրոզբոսաշրջության զարգացման ծրագիր՝ ներառելով մարզի տարբեր գյուղեր և այնտեղ զբոսաշրջիկների համար համապատասխան ագրոզբոսաշրջային ծառայություններ (մասնակցություն հողագործական աշխատանքներին, մրգերի բերքահավաք, մեղվաբուծություն, ազգային ուտելիքների պատրաստում, լավաշի և բոքոնի թխում, անասնապահական աշխատանքներ և այլն) և գյուղական միջավայրում հանգիստը կազմակերպելով: Ագրոզբոսաշրջության զարգացման նպատակով հարկ է նաև բնակիչների և հյուրընկալողների շրջանում կազմակերպել հյուրերի ընդունման և սպասարկման վերաբերյալ հատուկ դասընթացներ, համապատասխան զբոսաշրջային արդյունքի ստեղծման և գովազդման նպատակով համագործակցել զբոսաշրջային գործակալությունների հետ,

➢ հաշվի առնելով մարզի զբոսաշրջային ռեսուրսները՝ կազմակերպել տարբեր փառատոններ, օրինակ՝ Աշնակ գյուղում կարելի է կազմակերպել ծիրանի, ինչպես նաև սասունցիների երգի ու պարի փառատոններ: Ինչպես արդեն նշել ենք, Աշնակում է գտնվում նաև Գևորգ Չաուշի տուն-թանգարանը, և ամեն տարի մայիսի 27-ին այստեղ նշվում է ֆիդայատոնը՝ ֆիդայիների ոգեկոչման տոնը, ինչը ևս կարելի է մեծ շուքով տոնել՝ ներգրավելով զբոսաշրջիկներին: Աշտարակում կարելի է կազմակերպել ընկույզի և ծիրանի փառատոն, Ուջանում՝ դեղձի և խնձորի փառատոն:

Հաշվի առնելով մարզի զբոսաշրջային ռեսուրսները՝ հոդվածում հեղինակների կողմից մշակվել և առաջարկվում են հետևյալ երթուղիները, որոնք պետք է ընդգրկեն այցելություններ հոդվածում արդեն իսկ նկարագրված պատմամշակութային վայրերը.

✓ Զարինջա - Ծաղկասար - Թալին - Գառնահովիտ - Իրինդ - Մաստարա - Դաշտադեմ,
✓ Աշնակ - Կաթնաղբյուր - Արուճ - Կոշ - Ուջան - Աղնք - Ագարակ,
✓ Աշտարակ - Օշական - Ոսկեվազ,
✓ Փարպի - Մուղնի - Կարբի - Օհանավան - Սաղմոսավան,
✓ Տեղեր - Բյուրական - Ամբերդ - Արագած լեռ,
✓ Երնջատափ - Ջրամբար - Եղիպատրուշ - Թթուջուր,
✓ Հայկական Տառեր - Ապարան - Լուսագյուղ,
✓ Գեղարոտ - Գեղաձոր - Արագած,
✓ Վերելք դեպի Արա և Աքլորաքար լեռներ:

Անշուշտ, զբոսաշրջության զարգացումը կնպաստի ենթակառուցվածքների բարելավմանը, ներդրումների ներգրավմանը, մարզի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, եկամտի ապահովմանը, ինչպես նաև ազգային, հոգևոր-մշակութային արժեքների պահպանմանն ու արժևորմանը:

Марине Геворкян, Гаяне Товмасян, ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ. Арагацотнская область Республики Армения богата историческими и культурными памятниками, монастырями. В статье представлен анализ некоторых памятников истории и культуры Арагацотнского региона, которые можно превратить в туристические достопримечательности. Проведен анализ туристической инфраструктуры региона. С целью выявления проблем развития туризма в регионе, в статье был проведен SWOT-анализ, в результате которого были сделаны необходимые выводы и рекомендации по развитию туризма в регионе. Были предложены туристические маршруты.

***Ключевые слова*:** Арагацотнская область, памятник истории и культуры, церковь, замок, туризм, туристические ресурсы, маршрут, SWOT-анализ.

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan, INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION. The Aragatsotn region of the Republic of Armenia is rich in historical and cultural monuments, monasteries. The article provides an analysis of some historical and cultural monuments of Aragatsotn region, which can be turned into tourist attractions. An analysis of the tourism infrastructure of the region was carried out. In order to identify the problems of tourism development in the region, SWOT analysis was carried out in the article, as a result of which the necessary conclusions and recommendations were made for the development of tourism in the region. Touristic routes have been proposed.

***Keywords*:** Aragatsotn region, historical and cultural monument, church, fortress, tourism, touristic resources, route, SWOT analysis.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200